

Հավելված N1
 Հայաստանի Հանրապետության
 պետական եկամուտների կոմիտեի նախագահի
 2020 թվականի ապրիլի 17-ի
 N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 30-04-2021 թ. որոշմամբ

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ Մարշալ Բաղրամյան պող. շ. 24	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.750182	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2013-01-21	
1.5 ՀՎՀՀ-ն	00120533	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10521362	
	+(374)55030007	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	http://hayagithimnadram.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@hagithimnadram.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ավետիք Իսահակյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	14	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր	Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման	47112400
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Ավիրատվություններ/ ավիրաբերություններ		
10.1 Ավիրատուները/ավիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Ավիրված/ավիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
՝Բանբեր հայագիտության՝ հրատարակում	9095603	
՝Հիմնադրար հայագիտություն էլեկտրոնային հանդես	4528291	
Գրքերի տպագրում	4262201	
Հայագիտական հետազոտական թեմաների ֆինանսավորում	23788000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	53607921	
13. Կանոնադրական նպատակների իրականացման ուղղված ծախսերի չափը	41674095	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 26 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

**Հայագիտական ուսումնասիրությունները Ֆինանսավորող
համահայկական հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



**Փի-Էջ-Փի Փարթնըրզ ՓԲԸ
PHP Partners CJSC**

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 15ա	Հեռ.	(+374)10204090
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan	Tel.	
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան, Ադոնցի 2, Երազ բիզնես կենտրոն	Էլ-փոստ	general@php.am
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia	E-mail	

ԱՆԿԱԽ ԱՌԻԳԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Հաշվետվություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, գուտակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հավաքականների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի* (ՀԷՄՄԻ կանոնագիրը) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԻ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Առանցքային աուդիտորական հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

2020 թվականի ընթացքում Հիմնադրամն իր գործունեությունը ծավալել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից 47,112 հազար ՀՀ դրամ դրամաշնորհից գոյացած գումարներից: Հիմնադրամը դրամաշնորհը ստանում է դրամաշնորհի հատկացման պայմանագրի հիման վրա, որը ներառում է միջոցների ծախսման վերաբերյալ նախահաշիվ: Հիմնադրամի կողմից ստացված դրամաշնորհները ճանաչվել են որպես շնորհ, որը մաշեցվել է շնորհի ստացման պայման հանդիսացող նախահաշվի հիման վրա ծախսերին համահունչ:

Շնորհների մասով մեր աուդիտորական ընթացակարգերը ներառել են՝

- Շնորհների ստացման գործընթացի քննարկում ղեկավարության հետ.
- Կատարված ծախսերի և նախահաշվով ներկայացված ծախսերի համադրում ընտրանքային եղանակով և այդ գումարների՝ շնորհների մաշվածության հետ համեմատում.
- Ղեկավարության հետ ստացված շնորհներից գոյացած մնացորդի հետագա օգտագործման քննարկում.
- Հիմնադրամի կողմից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային ներկայացված դրամաշնորհների օգտագործման հաշվետվությունների ընտրանքային ստուգում և համեմատում ճանաչված ծախսերի հետ.
- Շնորհների ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի համեմատում 2020 թվականին ներկայացված նախահաշվի հետ:

Մեր կողմից կատարված աուդիտորական ընթացակարգերի արդյունքում մենք հավաստիացանք ղեկավարության՝ շնորհների հաշվառման տեղին լինելու մեջ:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:


Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար



Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:



Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

Փի-Էջ-Փի Փարթնրոգ ՓԲԸ
29 ապրիլի 2021թ.



Լիլիթ Մինայան
Աուդիտորական
ղեկավար
ճառայությունների

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
 հաշվետվություն 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

'000 ՀՀ դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
Ընդհանրի ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցումից հասույթ		53,608	60,596
Ծառայությունների մատուցման ծախսեր (իրականացված ծրագրերի ինքնարժեք)	4	(41,674)	(48,557)
Համախառն հավելուրդ		11,934	12,039
Վարչական ծախսեր	5	(12,024)	(12,129)
Այլ ծախսեր		(402)	
Այլ եկամուտ		-	428
(Պակասուրդ)/հավելուրդ նախքան հարկումը		(492)	338
Շահութահարկի գծով ծախս	6	-	-
Չուտ (պակասուրդ)/հավելուրդ		(492)	338
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		(492)	338

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021 թվականի ապրիլի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից.

Ավետիք Իսահակյան
 Տնօրեն

Լաուրա Առուստամյան
 Գլխավոր հաշվապահ



*Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. #եկտեմբերի #4Փ դրությամբ#*

'000 ՀՀ դրամ	Ծնթգ.	2020թ.	2019թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	495	134
Ոչ նյութական ակտիվներ	8	277	367
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		772	501
Ընթացիկ ակտիվներ			
Դերհատրական պարտքեր	9	8	764
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	72,162	77,503
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		72,170	78,267
Ընդամենը ակտիվներ		72,942	78,768
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Կուտակված հավելուրդ		32,614	33,106
Ընդամենը զուտ ակտիվներ		32,614	33,106
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	494	134
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	10,679	10,680
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		11,173	10,814
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	23,048	29,500
Կրեդիտորական պարտքեր	12	2,309	1,550
Պահուստ	13	3,798	3,798
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		29,155	34,848
Ընդամենը պարտավորություններ		40,328	45,662
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		72,942	78,768

*Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

'000 ՀՀ դրամ	Կուտակված հավելուրդ	Ընդամենը զուտ ակտիվներ
Մնացորդը առ 01 հունվարի 2019թ.	32,768	32,768
<i>Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>		
Չուտ պակասուրդ	338	338
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	338	338
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	33,106	32,768
Մնացորդը առ 01 հունվարի 2020թ.	33,106	33,106
<i>Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>		
Չուտ հավելուրդ/(պակասուրդ)	(492)	(492)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(492)	(492)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	32,614	32,614

*Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

'000 ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Որպես շնորհներ ստացված դրամական միջոցներ	47,112	47,112
Գիտական թեմաների ֆինանսավորում	(26,124)	(22,614)
Վճարումներ աշխատակիցներին	(16,374)	(17,263)
Վճարված հարկեր	(4,981)	(5,890)
Վճարումներ մատակարարներին	(4,056)	(5,191)
Այլ	(200)	(9,387)
Դրամական միջոցների հոսքեր օգտագործված գործառնական գործունեությունում	(4,623)	(13,233)
ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(718)	-
Դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում	(718)	-
Դրամական միջոցների և դրանց համաժեքների զուտ (նվազում)	(5,341)	(13,233)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակահատվածի սկզբի դրությամբ	77,503	90,736
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակահատվածի վերջի դրությամբ (ծնթգ. 10)	72,162	77,503

1 Նախապատմություն

(ա) Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է գիտական, գիտակրթական, սոցիալական, բարեգործական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության:

Հիմնադրամի ֆինանսական միջոցները ձևավորվում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայից դրամաշնորհների ստացումից:

Հիմնադրամի փաստացի շահառուներ են համարվում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կազմի մեջ մտնող համապատասխան գիտական կազմակերպությունները, ՀՀ-ի բուհական համակարգի համապատասխան գիտական ստորաբաժանումները, ինչպես և այլ գերատեսչական պատկանելություն ունեցող հայագիտական կազմակերպությունները և դրանցում աշխատող գիտնականները, ինչպես նաև հիմնադիրը, հիմնադրամի մարմինների անդամները, հիմնադրամի աշխատողները:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող տնտեսական և ֆինանսական փոփոխությունները, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին, իրենց ազդեցությունն ունեն և կարող են շարունակել ունենալ այն կազմակերպությունների վրա, որոնք իրենց գործունեությունն են ծավալում Հայաստանի Հանրապետությունում: Ի լրումն՝ վարկային և կապիտալի շուկաներում առկա անկումն ավելի է մեծացնում տնտեսական միջավայրում անորոշությունների մակարդակը: Ներկայացված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի ֆինանսական դրության և գործառնությունների վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2020 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետությունում բռնկված պատերազմը, ինչպես նաև կորոնավիրուսի համաճարակը հանգեցրել են գործարար միջավայրում անորոշությունների: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքով:

(բ) Զափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքի հիման վրա:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ): Դրամը հանդիսանում է Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների, ենթադրությունների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական քաղաքականության կիրառման և ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ճանաչված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց համար հիմք հանդիսացող ենթադրությունները կանոնավոր կերպով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ գնահատումները վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդեցություն ունեն:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում:

- Ծանոթագրություն 7 – հիմնական միջոցներ, օգտակար ծառայության ժամկետների գնահատումներ,
- Ծանոթագրություն 8 – ոչ նյութական ակտիվներ, օգտակար ծառայության ժամկետների գնահատումներ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ներքոնշյալ հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթների գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթի փոխարկումից օգուտը կամ վնասը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթի ամորտիզացված արժեքի՝ ճշգրտված ժամանակաշրջանի ընթացքում արդյունավետ տոկոսի և վճարումների գծով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված արտարժույթի ամորտիզացված արժեքի միջև տարբերությունն է:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթ կամ վնասում՝ բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

(բ) Ֆինանսական գործիքներ

i. Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի դեբիտորական պարտավորությունները, ժամկետային ավանդները և դրամական միջոցները ու դրանց համարժեքները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ:

Հիմնադրամը դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, և դրամական միջոցները ու դրանց համարժեքները սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը:

Հիմնադրամն ապանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Հիմնադրամի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին իրենց հետագա չափումից կախված դասակարգվում են որպես՝

- ամորտիզացվող արժեքով չափվող.
- հավելուրդի կամ պակասուրդի միջոցով իրական արժեքով չափվող.
- այլ համապարփական եկամտի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվների սկզբնական դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրից և Հիմնադրամի դրանց կառավարման բիզնես մոդելից:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացվող արժեքով:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասը բաղկացած է դեբիտորական պարտքերից և դրամական միջոցներից ու դրանց համարժեքներից:

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և բանկերում պահվող ընթացիկ հաշիվները, ցպահանջ ավանդները և բարձր իրացվելի ներդրումները, որոնք ունեն ձեռքբերման օրվանից երեք ա-միս, կամ ավելի քիչ մարման ժամկետ:

ii. Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի կրեդիտորական պարտավորությունները հանդիսանում են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ դրանց առաջացման օրը:

Հիմնադրաման ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հիմնադրամը չունի իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:

(գ) Հիմնական միջոցներ

i. Ծանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, աշխատուժի ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված այլ արտադրական ծախսումները, հիմնական միջոցների ապամոնտաժման և շահագործումից հանման ու տեղանքի վերականգնման ծախսումները և որակավորված ակտիվների ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող փոխառության ծախսումները, եթե կապիտալացման սկզբի ամսաթիվը հանդիսանում է 2009 թվականի հունվարի 1-ը կամ դրանից հետո մեկ այլ ամսաթիվ: Զեռքբերված ծրագրային սպահովման արժեքը, որը հանդիսանում է հիմնական միջոցի ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ հիմնական միջոցի բաղկացուցիչ մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը ճանաչվում են այլ եկամուտների/այլ ծախսերի կազմում շահույթ կամ վնասում:

ii. Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելուն պես:

iii. Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը հիմնված է ակտիվի սկզբնական արժեքի և մնացորդային արժեքի վրա:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում բացառությամբ այն դեպքերի, երբ մաշվածության ծախսումները ներառվում են այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- Համակարգչային տեխնիկա՝ 1-5 տարի
- Գրասենյակային գույք՝ 5 տարի

(դ) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքի և իրացման գուտ արժեքի նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հիմնված է միջին կշռված մեթոդի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման, տրանսպորտային ծախսումները, մաքսային վճարները, ինչպես նաև պաշարները ներկա գտնվելու վայր և ներկա վիճակի բերելու հետ կապված ծախսումները:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

(ե) Շնորհներ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից և դոնոր կազմակերպություններից ստացված միջոցների հաշվառումն իրականացվում է ՀՀՄՍ 20 Պետական շնորհներ ստանդարտի հիման: Շնորհները կազմակերպությունների և պետական մարմինների կողմից ռեսուրսների փոխանցումներն են Հիմնադրամին՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Հիմնադրամի ակտիվները ֆինանսավորվում են շնորհներով, որոնք սովորաբար իրականացվում են ստացված դրամական միջոցների տեսքով:

Հիմնադրամը ճանաչում է ակտիվներին վերաբերող շնորհները՝ որպես հետաձգված եկամուտ, որը ամորտիզացվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Հետաձգված եկամուտը սովորաբար դասակարգվում է որպես ոչ ընթացիկ պարտավորություններ: Այն մասը, որը հաջորդ տարի պետք է ճանաչվի եկամուտ, ներկայացվում է ընթացիկ պարտավորություններում:

Հիմնադրամը ներկայացնում է եկամուտներին վերաբերող շնորհները՝ օգտագործելով համախառն մոտեցումը:

(զ) Արժեզրկում

i. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերի) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Հիմնադրամին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայում, որը Հիմնադրամն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը:

Ամորտիզացիոն արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստները հաշվարկվում է որպես հաշվեկշռային արժեքի և ապագա դրամական հոսքերի ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչման ներկա արժեքի տարբերություն:

Կորուստները ճանաչվում է շահույթ կամ վնասում և արտահայտում են դերհտորական պարտքերի նկատմամբ ձևավորված պահուստների հաշվում:

ii. Ոչ ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամը ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվների փոխհատուցվող գումարները: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր (‘դրամաստեղծ միավոր’):

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթ կամ վնասում, եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջիններիս փոխհատուցվող գումարը: Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստը, այդ միավորի ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով, բաշխվում է նախ դրամաստեղծ միավորին բաշխված գուղվիյին, այնուհետև՝ դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) այլ ակտիվներին՝ համամասնական հիմունքով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(Է) Ծնորհների ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցումից հասույթ

Ծնորհները սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, եթե առկա է հիմնավոր հավաստիացում, որ շնորհները ստացվելու են և կազմակերպությունը բավարարելու է դրանց կցված պայմանները:

Ծնորհները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում որոնց ընթացքում կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված է շնորհը:

Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում սխտեմատիկ հիմունքով ակտիվի օգտակար ծառայության ժամանակաշրջանների ընթացքում:

(ը) Ծախսեր

Ծախսերը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երբ տեղի են ունենում:

(թ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է տոկոսային եկամուտը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ժ) Ծահութահարկի գծով ծախս

Ծահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ծահութահարկի գծով ծախսը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն գուտ ակտիվներում ճանաչված հողվածներին, որի դեպքում այն ճանաչվում է գուտ ակտիվներում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է օգտագործելով հաշվեկշռային մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների վրա, որոնք առաջանում են՝

- ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և, որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա,
- դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող տարբերությունների համար այնքանով, որքանով հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում,
- գուղվիի սկզբնական ճանաչումից:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների հանդեպ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն առկա է մտադրություն հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

(ի) Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք պարտադիր են 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջանների համար և Հիմնադրամի կողմից ավելի վաղ չեն ընդունվել:

*Հայագիտական ուսումնասիրությունները Ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

Նշված նոր ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցության Հիմնադրամի գնահատականը ներկայացված է ստորև՝

Անվանումը	Հիմնական պահանջները
<p><i>Էականության սահմանումը. Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում</i></p> <p>Ուժի մեջ մտնելը՝ 2020 թվականի հունվարի 1</p>	<p>ՀՀՄՍԻ-ն փոփոխություններ է կատարել «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1 և «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8 ստանդարտներում, համաձայն որոնց Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտներում և Ֆինանսական հաշվետվողականության հայեցակարգային հիմունքներում հետևողականորեն կիրառվում է «Էականության» սահմանումը, պարզաբանվում է, երբ է տեղեկատվությունն էական՝ ներառելով ոչ էական տեղեկատվությանը վերաբերող ՀՀՄՍ 1-ի ուղեցույցից որոշ հատվածներ:</p> <p>Մասնավորապես, փոփոխությունները պարզաբանում են՝</p> <ul style="list-style-type: none"> • Որ տեղեկատվությունը ոչ հստակ ներկայացնելու հղումը վերաբերում է այն դեպքերին, երբ հետևանքը նույնն է, երբ բաց է թողնվում կամ ոչ ճիշտ է ներկայացվում այդ տեղեկատվությունը, և, որ կազմակերպությունը էականությունը գնահատում է Ֆինանսական հաշվետվությունների համատեքստում՝ որպես ամբողջություն, և • «ընդհանուր օգտագործման ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողներ» բառակապակցության իմաստը, որոնց համար պատրաստվում են այդ ֆինանսական հաշվետվությունները՝ սահմանելով այդ օգտագործողներին, որպես «առկա և պոտենցիալ ներդրողներ, փոխատուներ և այլ կրեդիտորներ», ովքեր անհրաժեշտ ֆինանսական տեղեկատվության համար պետք է հիմնվեն ընդհանուր նպատակի ֆինանսական հաշվետվությունների վրա:
<p><i>Ֆինանսական հաշվետվողականության վերանայված հայեցակարգային հիմունքներ</i></p> <p>Ուժի մեջ մտնելը՝ 2020 հունիսի 1</p>	<p>ՀՀՄՍԻ-ն թողարկել է Հայեցակարգային հիմունքների վերանայված տարբերակը, որը նախատեսվում է կիրառել ստանդարտների մշակման փուլերում: Հիմնական փոփոխություններն ՝</p> <ul style="list-style-type: none"> • Ֆինանսական հաշվետվողականության նպատակում ռեսուրսների (տնտեսական կառավարման) կարևորության բարձրացում, • Հաշվենկատությունը, որպես չեզոքության բաղադրիչ, ամրապնդում • հաշվետու կազմակերպության սահմանում, որը կարող է լինել իրավաբանական

	<p>կազմակերպություն, կամ կազմակերպության մի մաս,</p> <ul style="list-style-type: none"> • ակտիվի և պարտավորության սահմանումների վերանայում, • ճանաչման վերաբերյալ հավանականության շեմի վերացում և ապաճանաչման վերաբերյալ ուղեցույցի ավելացում, • չափման տարբեր հիմունքների վերաբերյալ ուղեցույցի ավելացում, և • ամրագրում, որ շահույթը կամ վնասը հանդիսանում է արդյունավետության հիմնական հայտանիշը և, որ ըստ էության, այլ համապարփակ եկամտում եկամուտները և ծախսերը պետք է կրկին ճանաչվեն, որը կբարձրացնի ֆինանսական հաշվետվությունների տեղին լինելը և արժանահավատությունը: <p>Հաշվապահական հաշվառման այս պահին գործող ստանդարտներում որևէ փոփոխություն չի կատարվելու: Այդուհանդերձ, այն կազմակերպությունները, որոնք իրենց գործառնությունների, դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականություն որոշելիս հիմնվում են Հիմունքների վրա, որոնք այլապես չեն ընդգրկվում հաշվապահական հաշվառման գործող ստանդարտներում, 2020 թվականի հունվարի 1-ից պետք է կիրառեն Հայեցակարգային հիմունքների վերանայված տերբերակը: Այս կազմակերպությունները պետք է դիտարկեն հաշվապահական հաշվառման իրենց քաղաքականության համապատասխանությունը վերանայված Հիմունքների շրջանակներում:</p>
<p>COVID 19-ի հետ կապված <i>Վարձակալական գիջումներ – Փոփոխություններ ՖՀՄՄ 16-ում</i></p>	<p>COVID -19 համավարակով պայմանավորված՝ վարձակալներին շնորհվել են վարձակալական գիջումներ: Նման գիջումները կարող են արտահայտված լինել տարբեր ձևերով՝ վճարման հետ կապված արձակուրդներ, վարձավճարների հետաձգումներ և այլն: 2020 թվականի մայիսին, ՀՀՄՄԻ-ն փոփոխություններ է կատարել «Վարձակալություն» ՖՀՄՄ 16-ում, համաձայն որի վարձակալներին տրամադրվել է հնարավորություն որակավորվող վարձակալության գիջումները դիտել այնպես, ինչպես, նրանք կդիտեին, եթե վարձակալական որևէ ձևափոխում կատարված չլիներ: Բազմաթիվ դեպքերում, նշվածը կհանգեցնի նրան, որ գիջումները կհաշվառվեն որպես փոփոխական վարձավճարներ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք շնորհվել են:</p>

*Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

	<p>Այն կազմակերպությունները, որոնք կիրառում են գործնական դիտարկումները, պետք է բացահայտեն այս փաստը, արդյոք՝ դիտարկումը կիրառվել է որակավորվող վարձակալական բոլոր զիջումների նկատմամբ, իսկ եթե ոչ, ապա տեղեկատվություն այն պայմանագրերի բնույթի վերաբերյալ, որոնց նկատմամբ այդ դիտարկումը կիրառվել է, ինչպես նաև այդ զիջումներից առաջացած շահույթ կամ վնասում ճանաչված գումարը:</p>
<p><i>Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ - Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում</i></p> <p>Ուժի մեջ մտնելը՝ 2022 թվականի հունվարի 1 (հնարավոր է հետաձգվի մինչև 2023 թվականի հունվարի 1)</p>	<p>«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պարտավորությունները դասակարգվում են որպես ընթացիկ և ոչ ընթացիկ՝ կախված ընդհանրապես ժամանակաշրջանի վերջում առկա իրավունքներից: Դասակարգումը ազդեցությունչունի հաշվետու ամսաթվից հետո (օրինակ՝ համաձայնության մեջում կամ խախտում) կազմակերպության ակնկալիքների կամ տեղի ունեցող դեպքերի վրա: Կատարված փոփոխությունները անդրադառնում են նաև, թե ինչ նկատի ունի ՀՀՄՍ 1-ը, երբ խոսքը գնում է պարտավորության մարման մասին:</p> <p>Փոփոխությունները կարող են ազդել պարտավորությունների դասակարգման վրա, մասնավորապես այն կազմակերպությունների դեպքում, որոնք նախկինում հաշվի են առել դեկավարության մտադրությունները դասակարգման որոշման առումով և որոշ պարտավորությունների դեպքում, որոնք կարող են փոխակերպվել սեփական կապիտալի:</p> <p>Փոփոխությունները եպտք է կիրառվեն հետընթաց՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8-ի բնականոն պահանջներին համահունչ:</p> <p>2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկել է Նախնական փաստաթուղթ՝ առաջարկելով հետաձգել փոփոխությունների ուժի մեջ մտնելը մինչև 2023 թվականի հունվարի 1-ը:</p>
<p><i>Հիմնական միջոցներ. մուտքերը նախքան նախանշած նպատակներով օգտագործումը</i></p> <p>Ուժի մեջ մտնելը՝ 2022 թվականի հունվարի 1</p>	<p>«Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի փոփոխությունները կազմակերպությանն արգելում են հիմնական միջոցի արժեքից հանել վաճառքից ստացված մուտքերն այն ընացքում, երբ կազմակերպությունն ակտիվը պատրաստում է նախանշած նպատակներով օգտագործման համար: Փոփոխությունները պարզաբանում են նաև, որ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական արդյունավետությունը գնահատելիս՝ կազմակերպությունը «ստուգում է՝ արդյոք ակտիվը գործում է պատշաճ կերպով, թե ոչ»: Ակտիվի ֆինանսական արդյունավետությունը տեղին չէ այս գնահատման համատեքստում:</p>

*Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

	<p>Կազմակերպությունները պետք է առանձին-առանձին բացահայտեն արտադրվող հիմնական միջոցների վերաբերող մուտքերի և ծախսումների գումարները, որոնք չեն համարվում կազմակերպության սովորական գործունեության արդյունք:</p>
<p><i>Անբարենպաստ պայմանագրեր-Պայմանագրի իրականացման արժեքը. Փոփոխություններ ՀՀՄՍ 37-ում</i></p> <p>Ուժի մեջ մտնելը՝ 2022 թվականի հունվարի 1</p>	<p>ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը պարզաբանում է, որ պայմանագրի իրականացման հետ կապված ուղղակի ծախսումները ներառում են և պայմանագրի իրականացման հետ կապված լրացուցիչ ծախսումները, և պայմանագրերի իրականացման հետ ուղղակիորեն կապված այլ ծախսումների բաշխմանը: Նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ճանաչումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ, որն առաջացել է այն ակտիվների գծով, որոնք օգտագործվել են պայմանագրի իրականացման ընթացքում:</p>
<p><i>Տարեկան բարեփոխումներ 2018-2020թթ. ՖՀՄՍ-ներում</i></p> <p>Ուժի մեջ մտնելը՝ 2022 թվականի հունվարի 1</p>	<p>2020 թվականի մայիսին տեղի են ունեցել հետևյալ բարեփոխումները՝</p> <ul style="list-style-type: none"> • «<i>Ֆինանսական գործիքներ</i>» ՖՀՄՍ 9 – պարզաբանվում են, թե որ վճարումները պետք է ներառվեն ֆինանսական պարտավորությունների ապանաչման գծով 10 տոկոսանոց թեստում: • «<i>Լարձակալություն</i>» ՖՀՄՍ 16 – Ցուցադրական օրինակ 13-ի փոփոխությունը՝ վերացնել վարձակալության վրա կատարած բարելավումներին վերաբերող վարձատուից ստացվող ցուցադրական վճարները, վերացնել վարձակալական խրախուսումների հաշվառման հետ կապված ցանկացած խառնաշփոթ: • «<i>Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում</i>» ՖՀՄՍ 1 – այն կազմակերպություններին, որոնք իրենց ակտիվները և պարտավորությունները չափել են մայր կազմակերպության գրանցամատյաններում հաշվեկշռային արժեքով՝ թույլատրվում է նաև չափել փոխարկման հետ կապված կուտակային տարբերությունները՝ կիրառելով մայր կազմակերպության կողմից գրանցված գումարները: Այս փոփոխությունը նաև կիրառվելու է ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների նկատմամբ, որոնք որդեգրել են ՖՀՄՍ 1-ի բացառությունը: • «<i>Գյուղատնտեսություն</i>» ՀՀՄՍ 41 – կազմակերպությունների համար այն պահանջի վերացում, համաձայն որի ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքի չափման ընթացքում, կազմակերպությունները պետք է

*Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

	<p>բացառեն դրամական միջոցների հոսքերի հարկումը: Սույն փոփոխությունը իրականացվել է համապատասխանելու ստանդարտի այն պահանջին, համաձայն որի դրամական միջոցների հոսքերը պետք է գեղջվեն հարկերից հետո հիմունքով:</p>
--	--

4 Ծառայությունների մատուցման ծախսեր (իրականացված ծրագրերի ինքնարժեք)

'000 ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Գիտական թեմաների ֆինանսավորում	23,788	21,557
«Բանբեր» հայագիտական հանդեսի հրատարակման ծախսեր	9,096	9,562
«Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային հանդեսի ծախսեր	4,528	4,856
Նոնֆերանսների ու սեմինարների կազմակերպման, գրականության տպագրման և այլ ծախսեր	4,262	12,582
	41,674	48,557

5 Վարչական ծախսեր

'000 ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Աշխատակիցների հատուցումներ	10,789	10,998
Աուդիտ	600	600
Մաշվածություն և անորտիզացիա	372	202
Փոստ և հեռահաղորդակցություն	116	106
Այլ	147	223
	12,024	12,129

6 Ծահութահարկի գծով ծախս

Ընթացիկ հարկի կիրառելի հարկային դրույքը Հայաստանում կազմում է 18% (2019 թվականին՝ 20%):

'000 ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Ընթացիկ հարկի ծախս	-	-
Հետաձգված հարկային ծախս	-	-
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	-	-
	-	-

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2020թ.		2019թ.	
	'000 ՀՀ դրամ	%	'000 ՀՀ դրամ	%
(Պակասորդ)/հավելուրդ նախքան հարկումը	(492)		338	
Ծահութահարկի գծով փոխհատուցում հաշվարկված կիրառելի հարկային դրույքով	(89)	(18)	68	(20)
(Զնվազեցվող)/չհարկվող հոդվածներ	89	18	(68)	20
	-	-	-	-

7 Հիմնական միջոցներ

'000 ՀՀ դրամ	Մերենա սարքավորումներ	Տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդն առ 01 հունվարի 2019թ. Ավելացումներ	3,081 -	145 -	3,226 -
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	3,081	145	3,226
Մնացորդն առ 01 հունվարի 2020թ. Ավելացումներ	3,081 718	145 -	3,226 718
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	3,799	145	3,944
Մաշվածություն			
Մնացորդն առ 01 հունվարի 2019թ. Տարվա ծախս	2,916 76	83 17	2,999 93
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	2,992	100	3,092
Մնացորդն առ 01 հունվարի 2020թ. Տարվա ծախս	2,992 340	100 17	3,092 357
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	3,332	117	3,449
Զուտ հաշվեկշռային արժեք			
Առ 01 հունվարի 2019թ. Առ 31 դեկտեմբերի 2019թ. Առ 31 դեկտեմբերի 2020թ.	165 89 467	62 45 28	227 134 495

2020 թվականին ընթացքում հիմնական միջոցների մաշվածության ծախսերը 282 հազար ՀՀ դրամ գումարով ճանաչվել է վարչական ծախսերում, իսկ մյուս մասը՝ 75 հազար ՀՀ դրամով՝ ծառայությունների մատուցման ծախսերում՝ «Հիմնարար հայագիտություն» էլեկտոնային հանդեսի ծախսերում (2019 թվականին՝ 17 հազար ՀՀ դրամ վարչական ծախսերում, 76 հազար ՀՀ դրամ՝ ծառայությունների մատուցման ծախսերում՝ «Հիմնարար հայագիտություն» էլեկտոնային հանդեսի ծախսերում):

8 Ոչ նյութական ակտիվներ

'000 ՀՀ դրամ	Ոչ նյութական ակտիվներ
Սկզբնական արժեք	
Մնացորդն առ 01 հունվարի 2019թ. Ավելացումներ	1,259 -
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	1,259
Մնացորդն առ 01 հունվարի 2020թ. Ավելացումներ	1,259 -
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	1,259
Ամորտիզացիա	
Մնացորդն առ 01 հունվարի 2019թ. Տարվա ծախս	707 185
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	892
Մնացորդն առ 01 հունվարի 2020թ.	892

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՊՊՈՒ ՀՀ դրամ	Ոչ նյութական ակտիվներ
Տարվա ծախս	90
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	982
Չուտ հաշվեկշռային արժեք	
Առ 01 հունվարի 2019թ.	552
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	367
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	277

2020 թվականի ընթացքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ամբողջությամբ ճանաչվել են վարչական ծախսերում (2019 թվականին ամբողջությամբ ճանաչվել են վարչական ծախսերում):

9 Գերհտորական պարտքեր

ՊՊՈՒ ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Տրված կանխավճարներ պետական բյուջեին	-	403
Տրված կանխավճարներ	8	361
	8	764

10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

ՊՊՈՒ ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Ընթացիկ հաշիվներ	72,054	76,951
ՀՀ ՊԵԿ-ում միասնական հաշիվ	108	552
	72,162	77,503

Հիմնադրամի ենթարկվածությունը վարկային ռիսկին բացահայտված է ծանոթագրություն 14-ում:

11 Ծնորհներ

ՊՊՈՒ ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ	33,727	40,180
Ակտիվներին վերաբերող շնորհներ	494	134
	34,221	40,314

12 Կրեդիտորական պարտքեր

ՊՊՈՒ ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Աշխատակիցներին հատուցումներ	2,309	1,550
	2,309	1,550

13 Պահուստ

ՊՊՈՒ ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Ծահույթահարկի գծով պահուստ	3,798	3,798
	3,798	3,798

14 Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Հիմնադրամը ենթարկվում է հետևյալ ռիսկերի.

- վարկային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Հետագա քանակական բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվություններում:

(բ) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում է Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի ներդրման, ինչպես նաև հետագա փոփոխման համար: Ղեկավարությունը չի ստեղծել վերահսկող ֆորմալ մարմին, որը պատասխանատու է ռիսկերի կառավարման համար, սակայն գոյություն ունի ռիսկերի կառավարման որոշակի քաղաքականություն, որը նպատակ ունի ապահովել երկարաժամկետ հատվածում Հիմնադրամի կենսունակությունը և գործունեության առավելագույն արդյունավետությունը: Հիմնադրամի տնօրենը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղականության մշակման և վերահսկման համար:

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու Հիմնադրամի ռիսկն է, եթե գնորդը կամ ֆինանսական գործիքի կիրառության մյուս կողմը չկարողանա կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Այն հիմնականում առաջանում է Հիմնադրամի կողմից դեբիտորական պարտքերի և բանկերում գտնվող ժամկետային ավանդի ու ընթացիկ հաշիվների առնչությամբ:

i. Ընթացիկ հաշիվներ

Հիմնադրամը ենթարկվում է վարկային ռիսկի բանկերում ներդրված ընթացիկ հաշիվների և դրանց գծով հաշվեգրված, բայց չվճարված տոկոսագումարների առնչությամբ:

Ենթարկվածությունը վարկային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին: Ստորև ներկայացված է վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	Հաշվեկշռային արժեք	
	2020թ.	2019թ.
’000 ՀՀ դրամ		
ՀՀ ՊԵԿ–ում միասնական հաշիվ	108	552
Ընթացիկ հաշիվներ	72,054	76,951
	72,162	77,503

(գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Հիմնադրամի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե

սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Հիմնադրամի համբավը վտանգի ենթարկելու:

Հիմնադրամը պետական մարմնից դրամաշնորհի ստանալիս կազմում է ծախսերի նախահաշիվ, որն օգնում է կանխատեսել դրամական հոսքերի պահանջները և օպիմալացնել վճարումները:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը ֆինանսական պարտավորություններ չունի:

(դ) Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկերը շուկայական գների, օրինակ, արտարժույթի, փոփոխության հետևանքով Հիմնադրամի եկամուտների կամ դրա ակտիվների արժեքի վրա հնարավոր ազդեցության ռիսկերն են: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ընդունելի սահմաններում այս ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը չի իրականացրել արտարժույթով գործարքներ:

15 Պայմանական դեպքեր և պարտավորվածություններ

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռևս չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամն չի ապահովագրել իր գույքը կամ երրորդ կողմի պատասխանատվությունը գույքի և շրջակա միջավայրի նկատմամբ, որոնք կարող են առաջանալ պատահարներից կամ Հիմնադրամի գործունեությունից: Մինչ Հիմնադրամի կողմից համարժեք ապահովագրական ծածկույթ ձեռք բերելը, գոյություն ունի ռիսկ, որ որոշ ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործառնությունների և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Գատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը ներգրավված չէ որևէ նշանակալի դատական գործերում և հայցերում:

(գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության որոշումների, պաշտոնական պարզաբանումների և այլ իրավական ակտերի հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների և տարընթերցումների առարկա են: Հարկային վարչարարությունն իրականացվում է տարբեր պետական և համայնքային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր և տուգանքներ:

Այս փաստերը Հայաստանում, այլ երկրների համեմատությամբ, կարող են ավելի մեծ և էական հարկային ռիսկեր առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ իր հարկային պարտավորությունները գնահատել է ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

16 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Հիմնադրամի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում հոգաբարձուների խորհուրդը, որը նախագահում է պարոն Ռադիկ Մարտիրոսյանը (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ):

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

i. Ղեկավարության վարձատրություն

Ստորև ներկայացված է ղեկավար անձնակազմի վարձատրությունը, որը ներառված է վարչական ծախսերի մեջ (ծանոթագրություն 5):

՝000 ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Տնօրեն	3,093	3,104
	3,093	3,104

(բ) Գործարքներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ

՝000 ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.	2020թ.	2019թ.
	Գործարքի մնացորդ	Գործարքի մնացորդ	Գործարքի արժեք	Գործարքի արժեք
Ստացված դրամաշնորհ	34,221	40,313	47,112	47,112
Գիտական թեմաների ֆինանսավորում	-	-	23,788	21,557
Այլ օժանդակություն	-	-	3,764	10,531
Ծառայությունների ստացում	-	-	2,026	3,775
	34,221	40,313	76,690	82,975

17 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2021 թվականի հունվար-մարտ ամիսներին Հիմնադրամը ստացել է 9,423 հազար դրամ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից դրամաշնորհ:

Համաձայն 2021 թվականի մարտի 18-ի թիվ 371-Ն կառավարության որոշման հավելված 10-ով Հիմնադրամի տարեկան դրամաշնորհը նվազեցվել է 23,750 հազ.դրամ գումարով: